

**ԺԴ ԴԱՐԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՄԱՏԵՆԱԳԻՐ ՍԱՆԱԿ ՄԻԱՅՆԱԿԵԱՑԻ
ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՐ**

Ակներեւ է այն կարեւոր դերակատարութիւնը, որ տաթեւեան դպրոցն ունեցաւ Հայ եկեղեցու աստուածաբանութեան, մասնաւորաբար դաւանական մտքի պատմութեան մէջ: Այդ են վկայում այն բազում երկերը, որոնք շրջանառութեան մէջ դրուեցին ԺԴ-ԺԵ դդ.: Հաւաճառական յատուկ ուղղութեամբ աչքի ընկնող այդ երկերի յօրինման շարժառիթը Արեւմտեան եկեղեցու վարչաքաղաքական, ծավալապաշտական հավակնութիւններն էին: Դրանց դեմ իրենց գրիչը շարժեցին Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթեւացին, Մատթեոս Զուգայեցին եւ ուրիշներ: Տաթեւեան դպրոցի փառքը Հյուսիս Կովկասի փաղանգին է միանում եւս մի անուն. Սահակ Միայնակեաց: Նրա անունը յիշատակուած է Գրիգոր Տաթեւացու Հարցմանց գրքի իններորդ հատորում («Վասն նոր օրինաց եւ եկեղեցւոյ զանազան հարցմունք»), իբրեւ այդ հատորի պատուիրատու¹: Եւ քանի որ Տաթեւացին իր երկը սկսել է շարադրել 1380-ական թուականներին եւ աւարտել 1397-ին², ուստի բնականաբար պէտք է եզրակացնել, որ նա Սահակից պատուէր ստացել է 1380-ական թթ.: Պատուիրատուի կամ խնդրողի հանգամանքն ըստինքեան ակնարկ է նրանց մերձ յարաբերութիւնների մասին: Այս են վկայում հետեւեալ տողերը. «Այլ դու, ո՛վ այրդ Աստուծոյ մաքրամիտ եւ ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրդ Սահակ, թէ եւ զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ, սակայն կարող ես եւ զթերին ընուլ եւ գլաւելորդն կշռել եւ զմեզ օգտեցուցանել ի ներգոյէ քոյին պայծառամիտ սրբութեան սրտի, որովք միշտ երանութեամբ զԱստուծոյ տեսցես՝ հայելով յօրէնս նորա ի տուէ եւ ի գիշերի: Որ եւ յարագուարձ բարերջանկութեամբ լի եւ ամենազան քաղցրորակ պողաւէտութեամբ տնկեսցիս ծառ բարձրաբերձ յընթացս Հոգւոյն ի մէջ եկեղեցւոյ տանս Թորգոմեան ազգիս հայկազնեան: Ո՛ղ լեր ի Տէր ի պարծանս մեր»³: Բերված տողերը պարզիպարզօ վկայում են այն մեծ հեղինակութեան մասին, որ վայելել է Սահակը ոչ միայն իբրեւ «մաքրամիտ եւ ճգնազգեաց միայնաւոր», այլեւ իբրեւ բազմիմաց գիտնական այր, որն իր լայն իմացականութեամբ կարող է Հարցմանց գրքի «եւ զթերին ընուլ եւ գլաւելորդն կշռել»: Գիտնական հօր այսպիսի համբաւ ունեցող մէկը բնականաբար չէր կարող անտարբեր գտնուել գրչի նկատմամբ: Եւ հիրաւի, Ազգային եկեղեցու դաւանական մաքրութեանը նախանձախնդիր Սահակ Միայնակեացը ուսումնական նկատառումներից երկելով կազմել-խմբագրել է դաւանաբանական նիւթերի մի ժողովածու: Այդ ժողովածուն բովանակող ՄՄ թիւ 1712 ձեռագրի 2ա-113բ, 164ա թերթերում զետեղուած են Ներսէս Շնորհալու, Վահրամ Բարունու, Գրիգոր Տաթեւացու դաւանաբանական երկերում, ինչպես նաեւ՝ առ ի գիտութիւն Քաղկեդոնի դաւանանքը ներկայացնող

1 Տէն Տր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, Կ. Դ., 1943, էջ 366:

2 Տէն Ս. Արեւշատեան, Գրիգոր Տաթեւացին եւ նրա «Հարցմանց գիրքը», փոխ Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Բ փւլ., Երուսաղէմ, 1993, էջ 1:

3 Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, էջ 558:

երեք հատուածներ (86ա-93բ), որոնցից մէկի խորագրում, թերեւս հէնց կազմողի կողմից ընթերցողին կոչ է արուած. «Տես եւ զգոյշ լիւր, թիւր կայ եւ ուղիղ» (90 բ)⁴:

Ի շարս այդ նիւթերի ձեռագրի՝ ժողովածուն եզրափակող 93բ-113բ թերթերում գետեղուած է «Տեառն Ներսիսի Հայոց Կաթողիկոսի ասացեալ Դաւանումն ուղղափառ Հաւատոյ» խորագրով մի երկ (սկ. «Խոստովանիմք եւ դաւանիմք, պաշտեմք եւ երկրպագեմք...»): «Ներսիսի Հայոց Կաթողիկոսի» անունով այսպիսի մի երկ ինձ անձանօթ է: Իր դաւանաբանական երկերով յայտնի Ներսէս Շնորհալու թղթերում բացակայում է նման մի աշխատութիւն: Մինչդեռ այդ երկը պարունակող ՄՄ թիւ 728 (թ. 84ա), 774 (թ. 124բ), 1764 (թ. 368ա) ձեռագրերի խորագրում որպէս հեղինակ արձանագրուած է Սահակ Միայնակեացի անունը: Աւելին, Սահակի անունը յիշատակուած է նաեւ 1712 եւ 774 ձեռագրերում երկի վերջնական մասում իբրեւ հեղինակ՝ թերեւս իր իսկ աշակերտների կողմից. «Ձախատող սորին Սահակ կրօնաւոր, որ քրտնաջան երկաւք ի ջանս եւ ի վաստակս Աստուածաշունչ կտակարանաց խոկացեալ ի տուէ եւ ի գիշերի, եւ այսքան բարեաց պատճառ մեզ եղեալ: Յորժամ ընթեռնուք՝ յիշեցէք ի Քրիստոս» (թիւ 1712, թ. 164ա) կամ՝ «... զայսքանեաց բարութեանց պատճառս մեզ եղեալ Սահակ միայնակեաց, որ զայս աստուածային գանձս պարգեւեաց՝ որպէս Հայր, որ թողուցու ժառանգութիւն որդւոց իւրոց...» (թիւ 774, թ. 143բ)⁵: Ըստ այսմ, պետք է ենթադրել, որ իր հոգեւոր որդիներին այսպիսի աստուածային գանձեր պարգեւող Սահակը ոչ միայն կազմել-խմբագրել է դաւանաբանական նիւթեր, այլեւ իր ինքնուրոյն աշխատութեամբ Հարստացրել ու եզրափակել կազմած ժողովածուն: Տուրք տալով միջնադարում ընդունուած սովորոյթին՝ նա իր աշխատութիւնը վերագրել է անցեալի անառարկելի հեղինակութիւններից մեկին՝ Ս. Ներսէս Շնորհալուն⁶: Վերջինիս անունն առկայ է միայն ԺԵ դ. ընդօրինակուած ՄՄ թիւ 1712 ձեռագրում, որ, ինչպէս երեւում է, գրչագրուած է հեղինակային նախագաղափար օրինակից: Մինչդեռ յետագայում ընդօրինակուած միւս ձեռագրերի խորագրում, հիմք ընդունելով ճգնակեաց հօր աշակերտների հաղորդած յիշատակարանային տեղեկութիւնը՝ պարզիպարզոյ արձանագրուած է՝ «Սահակայ սուրբ միայնակեցի եւ երանեալ ճգնաւորի»: «Ի Սուրբ Երրորդութիւն եւ ընդգէմ չարափառացն հարցումն եւ պատասխանի» խորագրով այս երկը⁷ (ինչպէս յուշում է խորագրին իսկ) գրուած է Հարցուպատասխանի ձևով, ինչը Համապատասխանում է լատին Արեւմուտքում տարածուած վարդապետական աշխատութիւնների շարադրման եղանակին (*Questiones disputatae*)⁸:

4 Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մարենադարանի», հր. Ե, կազմեց Օ. Եզանեան, խմբ. Յ. Քեօւեան, Ա. Ղազարոսեան, Տ. Շահէ քիյ Նայրապետեան, Եր., 2009, էջ 937-939:

5 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մարենադարանի», հր. Գ, կազմեց Օ. Եզանեան, խմբ. Փ. Անթաթեանի, Յ. Քեօւեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քիյ Նայրապետեանի, Եր., 2007, էջ 669:

6 Ճառս հայրնի է նաև Պօղոս Տարոնեցու անունով, «Երիցս երանեալ սուրբ վարդապետին Պօղոսի Տարոնեցոյ ասացեալ, Բան հաւաքոյ ընդդէմ հերժուածողաց դաւանութեանն ի Սուրբ Երրորդութեանն», Երուսաղէմ, ձեռ. 1142, թ. 271ա-97բ, Կրէն Նորայր Արք. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հր. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 228-229: Երկը թիւքիմացաբար մասը համարուելով Պօղոս Տարոնեցու մարենադարական ժառանգութեան հրապարակուել է նրա անունով, ըստ ՄՄ թիւ 6907, 3918, 9410, 10199 ձեռագրերի. Կրէն «Գանձասար», Է., էջ 303-330:

7 «Եկեղեցու հայրեր, վարդապետներ» (IV-VIII դդ.) աշխարհագրական մէջ (Եր., 2007, էջ 243) թիւքիմացաբար Սահակի այս երկը վերագրել եմ Բսահակ Ատրու գրչին:

8 Տե՛ս Ա. վրդ. Օղորեան, Համառօտ ակնարկ Հայ Եկեղեցոյ վարդապետական աստուածաբանութեան

Սահակի երկում շօշափւում են գլխաւորաբար երրորդաբանական, քրիստոսաբանական խնդիրներ: Ելնելով Ազգային եկեղեցու դաւանաբանական սկզբունքներից ու հետեւելով կապաղովկեան հայրերի, մասնաւորապէս Ս. Գրիգոր Աստուածաբանի վարդապետական համակարգին՝ նա հաւասար ուժով շեշտում է Ս. Երրորդութեան անձանց թէ՛ զիմային ինքնայատկութիւնները եւ թէ՛ բնութեանական միութիւնը: Վարդան Արեւելցու նման⁹ Սահակ վարդապետը Ս. Երրորդութեան խորհրդի յայտնութիւնը տեսնում է արգէն Հին Կտակարանում: Բացատրելով «Տէր, Տէր առաքեաց զիս եւ Հոգի նորա» (Ես., ԽԼ 16) տեղին՝ նա ասում է, որ «Տէր»-երը ներկայացնում են Հօրը եւ Որդուն, իսկ «Հոգի նորա» արտայայտութիւնը մատնանիչ է անում Ս. Հոգուն: Արտայայտութեան բաղկացուցիչ «նորա» գերանումը ակնարկում է Ս. Հոգու միայն մէկից, այն է՝ Հօրից բխելը, ինչը բացառում է Արեւմտեան եկեղեցու օրինակարգած ֆիլիոքուէի («նաեւ յՈրդւոյ») տեսութիւնը: Առեւելոյթ այս տեսութեան օգտին խօսող եւ ըստ այսմ տարակոյսի տեղիք տուող տէրունական «Յիմմէ անտի առնուցու եւ պատմեացէ ձեզ» (Յովհ. ԺԶ 15) արտայայտութիւնը նա բացատրում է հիմնուելով դարձեալ տէրունական «Ոչ եթէ յանձնէ ինչ խաւեսցի» (Յովհ. ԺԴ 10), «Ես Հոգւովն Աստուծոյ հանեմ զգեւս» (Մտթ. ԺԲ 28) արտայայտութիւնների վրայ, որոնցով հաստատում է, թէ Որդին Հօրից լսածն է խօսում եւ պատմում, իսկ Հոգին իր հերթին «Որդւովն պատմէր զիմաստութիւն»: Հեղինակի վերջին արտայայտութիւնն (անշուշտ միջնորդաւորուած) արձագանքն է արգէն աւանդական դարձած Հոգին «Հօրից է Որդու միջոցով» հայրախօսական բանաձեւի¹⁰:

Երկում քրիստոսաբանական վերլուծութեան նիւթ են դարձել հետեւեալ հարցերը. Յիսուս Քրիստոս «ո՞րպէս էջ յարգանդ Կուսին, եւ կամ զի՞նչ ճառ, եւ որպէս միաւորեցաւ, եւ զի՞րդ կրեաց զկիրս ամենայն, եւ որպէ՞ս էր անմեկնելի եւ ի Հոգւոյն Սրբոյ»: Խօսելով յղութեան կերպի մասին՝ Սահակ վարդապետը նշում է, թէ «եկն Հոգին Սուրբ զաւրութեամբ եւ մաքրեաց զԿոյսն սուրբ յամենայն մարմնական կրից»: Այս արտայայտութիւնը, որ բառացիօրէն քաղուած է Ներսէս Շնորհալու Մատթէոսի Աւետարանի մեկնութիւնից¹¹, վարդապետական իր ակունքի մէջ աղերսուած է Ս. Գրիգոր Աստուածաբանի տեսութեանն, ըստ որի Յիսուս Քրիստոս ծնուել է Ս. Հոգու կողմից նախամաքրուած (prokaqarqeiths) Կոյսից¹²: Կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ ասելով հեղինակը հասկանում է Քրիստոսի աստուածամարդկային միաւորեալ մէկ կատարեալ բնութիւնը: Այս նշանակում է, որ Կոյսի արգանդ իջնելիս նա ընդունեց ոչ թէ մասնաւորը, այլ կատարեալը, որովհետեւ ինչպէս աստուածային եւ մարդկային կերպարանքների միաւորումը կազմում է մէկ կերպարանք, այնպէս էլ աստուածային եւ մարդկային բնութեան միաւորումն է կազմում մէկ

գրականութեան. «Գանձասար», Դ, 1993, էջ 63:

9 Տե՛ս Վարդան Արեւելցի, Շառք, Ներքողեանք, աշխատ. Յ. Քեռսէանի, Եր., 2000, էջ 11, 45:

10 Այս փետքիւնը պարզեցնում է մասնատրաբար յոյն հայրերին. փն Th. De Régnon, Etudes de Théologie positive, t. IV, P., 1898, էջ 80-88: Սակայն պէտք է նկատել, որ այդ միտքն առկայ է նաեւ Արեւմտեան եկեղեցու աստուածաբանութեան հիմնադիր Տերտուլիանոսի ժառանգութեան մէջ. «Ընդդէմ Պրաքսեոսի», 4. փն Եզնիկ Ժ. Վրդ. Պերոսեան, Հայրաբանութիւն, Ա, Ս. Էջմիածին, 1996, էջ 209:

11 Տե՛ս «Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալոյ...», Կ. Պոլիս, 1825, էջ 31:

12 Տե՛ս Թ. Տասնապետեան, Գրիգոր Նարեկացիի «Ներքող Աստուածամկին», «Հանդէս ամսօրեայ», 1989, էջ 132:

բնութիւն: Պարագան նոյնն է նաեւ աստուածային եւ մարդկային ներգործութիւնների, կամքերի, որոնց միաւորումը կազմում է մէկ կատարեալ ներգործութիւն եւ մէկ կատարեալ կամք: Ու եթէ տրոհենք աստուածային եւ մարդկային ներգործութիւնն ու կամքը՝ կյայտ-նունենք Նեստորի ու Եւտիքէսի շփոթ ծայրահեղութեան մէջ:

Բացառապէս Որդու մարմնացումն ու մարգացումը հեղինակը հիմնաւորում է նրա-նով, որ Հայրը լինելով անծին, չէր կարող մարմնանալ, որովհետեւ այդու կզրկուէր Հայ-րութիւնից: Նոյնն է Ս. Հոգու պարագան. որովհետեւ նա լինելով «բոլորումն» եւ ոչ ծնունդ, եթէ ծնուէր՝ կզրկուէր «Ի հոգիութենէ եւ Որդի լինէր»: Մինչդեռ այս փոփոխութիւնը բա-ցակայում է Որդու դէպքում, որ ծնուելով Հօրից, ժամանակի մէջ ծնւում է նաեւ Ս. Կոյսից եւ պահպանում իր որդիական հանգամանքը:

Որդու մարմնացումն ամենեւին չի նշանակում որեւէ հաւելում Հօր կամ Ս. Հոգու նկատմամբ, որովհետեւ նրա մարդեղութիւնը նախայաւիտեանական իրողութիւն է: Ըստ Սահակի բացատրութեան Տիրոջ «Որդի մարդոյ» անուանումը վերաբերում է ոչ միայն նրա մարդկութեանը, այլեւ՝ Աստուածութեանը: Սա հիմնաւորում է տէրունական «Եւա-նիցէ Որդի մարդոյ, ուր էր գառաջինն» (Յովհ. Զ 63) խօսքի մեկնաբանութեամբ, ըստ որի այստեղ Քրիստոս նկատի ունի իր աստուածամարդկային բնութիւնը, որ նա ունէր («ուր էր») ի սկզբանէ, որովհետեւ «Բանն Աստուած յառաջ քան գյաւիտեանս հանդերձ մարդ-կութեամբն էր Որդի Աստուծոյ»: Քրիստոսի աստուածամարդկային բնութեան նոյնականու-թիւնն ու անփոխութիւնութիւնն իր հաստատումը գտնում է նաեւ ծիսական գործառնու-թեան մէջ, «քանզի թէպէտ աւր ըստ աւրէ առնուն քահանայքն հաց եւ գինի անապական պատարագի, եւ ոչ յաւելու ի Քրիստոս...»¹³:

Աստուածամարդկային բնութեան փոխադրկապուած միութիւնն ու միաւորութիւնը փաստելու նպատակով հեղինակը Հայ Եկեղեցու քրիստոսաբանական դրուածքին բնորոշ պարագործաւ համադրումով եզրակացնում է, թէ ծնունդի մէջ առկայ է Քրիստոսի մար-դեղութեան խորհուրդը, մինչդեռ մահուան մէջ՝ Աստուածութեան: Սրանով հեղինակը հա-մատեղում է զիսկուրսիւ տրամաբանութեան համար անհամատեղելի երկու բնութիւններն իրրեւ մէկ Աստուածամարդկային բնութիւն: Սահակ Միայնակեացի երկում առհասարակ կարմիր թելի նման անցնում է Քրիստոսի աստուածամարդկային բնութեան ամբողջակա-նութեան գաղափարը: Այս գաղափարին է նա հետամուտ Տիրոջ մարմնի եւ Բանի անտ-րոհելիութիւնը հաստատելիս: Պատասխանելով չարափառների՝ տէրունական «Քակեցէք գտաճար (մարմինս) զայս, եւ ես զերկու աւուրս շինեցից» (Յովհ. Բ 19) խօսքի շահարկու-մին՝ Սահակը նշում է, որ ինչպէս Քրիստոսի մարմինն ու բանական հոգին ինքնակայ, մէկ մէկու անհաղորդ իրողութիւններ չեն, այնպէս էլ՝ մարմինը եւ Բանն Աստուած, որովհետեւ «զաւազակն, որ ի գրախտն, Քրիստոս տարաւ եւ ոչ առանձին Բանն Աստուած»: Ուստի մարմնով մեռած եւ հոգով կենդանի Քրիստոս (Ա Պետ. Գ 19) մէկ ամբողջութիւն է: Մէկ մէ-կու բացառող այս իրողութիւնների գոյակցութիւնը հիմք է տալիս դաւանաբան հեղինակին անճառելի եւ անթարգմանելի խորհուրդ համարել ինչպէս Քրիստոսի ծնունդը, նոյնպէս եւ մահը՝ գերեզմանը նույնացնելով Աստուածածնին:

13 Քրիստոսի մարմնի անկրօնելի եւ անհաւելելի ամբողջականութեան վերաբերեալ այս գաղափարի արձագանքը կայ Գրիգոր Տաթեւացու «Նարեկանց գրքում», փոխ էջ 597:

Երկը շարագրելիս Սահակ Միայնակեացը կիրառել է այլաբանական մեկնաբանութեան եղանակը: Բացատրելով «Հոգիս յաւժար է եւ մարմինս՝ տկար» (Մտթ. ԻԶ 41) արտայայտութիւնը՝ նա «Հոգին» այլաբանութիւնն է նկատում մարգարէների, ովքեր Թարոր լեռան վրայ խօսում էին Տիրոջ ապագայի մասին, իսկ «մարմին»-ը՝ աշակերտների, ովքեր տկար էին եւ չէին ուզում Տիրոջ չարչարանքները: Երրորդաբանական մեկնաբանութեան ուշագրաւ նմոյշ կարելի է համարել հետեւեալը. Ժխտելով հերձուածողների՝ Տիրոջ «Աստուած իմ, Աստուած իմ... Ընդէ՞ր թողէր զիս» (Մտթ. Իէ 46) խօսքի զարտուղի բացատրութիւնն այն մասին, թէ զա մարդկային բնութեան աղաղակն էր աստուածային բնութեանը՝ հեղինակը բացատրում է, որ Աստծոյ անուան երկիրցս արտաբերումն ակնարկում է Ս. Երրորդութեան (= «Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, Աստուած Յակոբայ», Ելք. Գ 6) անձանցից երկուսին՝ Հօրը (= Աստուած Աբրահամու) եւ Ս. Հոգուն (= Աստուած Յակոբայ): Այսպիսով՝ Իսահակի Աստուածը զիմում-աղաղակում է Աբրահամի եւ Յակոբի Աստծուն, այսինքն՝ Հօրը եւ Ս. Հոգուն: Եզրակացնելով՝ հեղինակը հաստատում է, որ Տէրն իր խաչելութեամբ Հօրն ու Սուրբ Հոգուն մօտեցրեց Ազամին:

Այլաբանական բացատրութեան ուշագրաւ օրինակ կարելի է համարել «Ետու ձեզ իշխանութիւն կոխել զաւճս եւ զկարիճս» (Ղուկ. Ժ 13) արտայայտութեան «աւճ» եւ «կարիճ» բառերի մեկնաբանութիւնը, ըստ որի «աւճս» ասելով «զգունդն զիւացն ցուցանէ եւ «կարիճ» զպեղծ հերձուածողսն նշանակէ»¹⁴:

Տիրոջ միաւորեալ բնութիւնը ցոյց տալու համար հեղինակը փորձում է մէկտեղել աստուածաբանական մտակառուցման երկու կարեւոր տեսակները՝ զաւանարանականն ու մեկնաբանականը: Յիշելով Քրիստոսի «Հոգիս յաւժար է, բայց մարմինս տկար...» խօսքի (Մտթ. ԻԶ 41, Մրկ. ԺԴ 38) շեղ մեկնաբանութիւնները, որոնք միտուած են երկփեղկելու Տիրոջ մարմինն ու Հոգին, մարդկային եւ աստուածային բնութիւնները՝ Սահակը «Հոգիս»-ը նոյնացնում է Ս. Հոգու հետ, «քանզի յաւժարութեամբ Սուրբ Հոգւոյն արար զամենայն»: Ինչպէս յայտնի է, Երրորդաբանութեան մէջ յստակօրէն զատորոշուած է Որդու նկատմամբ Հօր եւ Ս. Հոգու յարաբերութեան բնոյթը: Որդին գործում է Հօր կամքով, Ս. Հոգու յօժարութեամբ: Իրեւել զաւանարանական բացարձակ կաղապար այն անցել է Սահակի բացատրութեան մէջ՝ փոխադուցուելով մեկնաբանութեանը: Յետամուտ լինելով նոյն գաղափարին եւ կիրառելով նոյն եղանակը՝ նա Տիրոջ տկար մարմինը նոյնացնում է Աստուծոյ Բանին. մի մօտեցում, որ գրէթէ համերաշխ է Ս. Կիւրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական գիրքորոշմանը¹⁵ եւ հաստատումն է Ս. Գրիգոր Տաթեւացու Հարցմանց գրքում արծարծուած համապատասխան գաղափարի («Ապա ուրեմն Աստուած է նոյն մարմինն Քրիստոսի»¹⁶):

Իր աստուածաբանական երկը շարագրելիս Սահակ Միայնակեացը իրրեւ միջնադա-

14 Ի դէպ նկատենք, որ հերձուածողներին կարիճի է նմանեցնում Տերպուղիանոսն իր De baptismo (Մկրտութեան մասին) եւ Scorpiace (Նակաթոյն կարիճների դէմ) երկերում, «Творения Тертулиана, христианского писателя в конце второго и в начале третьего века», перевод Е. Карнеева, СПбург, 1847 (часть вторая), էջ 3-29, Եզնիկ Ժ. Վրդ. Պնարոսեան, նշվ. աշխ., էջ 201:

15 Վերապահութիւն ենթադրող «գրեթէ» բառն օգտագործում ենք այն պարճաւով, որ թելադր. ս. Կիրեղը ուսուցանում էր, թէ Հոգին ու մարմինը մէկ միութիւն են, բայց այդ միութիւնը «միութիւն է առանց երկու բնութիւնների խառնման, որ երկուսն էլ պահպանում են առանց փոփոխութեան կամ այլալոյսեան»: Յ. Բէնսէլեան, Եկեղեցու խայրեր, էջ 203:

16 «Գիրք Նարեկանց», էջ 72:

րի հեղինակ բնականաբար չէր կարող անտեսել անցեալի վարդապետական հարուստ ժառանգութիւնը: Ինչպէս արդէն տեսանք, նա բառացիօրէն օգտուել է Ս. Ներսէս Շնորհալու՝ Մատթէոսի Աւետարանի մեկնութիւնից: Անտարակոյս Սահակն աչքի առջեւ ունեցել է նաեւ Ս. Յովհան Ոսկեբերանի՝ Նսայու, Իգնատիոս Սելւեռնցու՝ Ղուկասու, Սարգիս Շնորհալու Ընդհանրական թղթերի մեկնութիւնները, Իգնատիոս Անտիոքացու, Ստեփանոս Օրբելեանի թղթերը, նիկիական դաւանութիւնը: Այդ են ցոյց տալիս ներքոբերեալ համադրումները:

ՅՈՎԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ, ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵԻ- ԼԵՈՆՅԻ, ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ	ՍԱՏԱԿ ՄԻԱՅՆԱԿԵԱՅ
Ոչ այր լոկ է եւ ոչ Աստուած մերկ. Ոսկ. Մեկն. Ես. Ոչ սոսկ մարդկութեան եւ ոչ մերկ Աստուածութեան. Սարգ. Ա. Պեպր. Թ.: Ոչ Աստուած մերկ է եւ ոչ մարդ սոսկ. Իգն. Մեկն. Ղուկ. , րէն՝ ս ՆԲՏ, Բ, էջ 254:	Քանզի ջուրն եւ արիւնն ոչ մերկ Աստուածութենէն ել եւ ոչ սոսկ ի մարդկութենէն...
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՅ (ԱՆՏԻՈՒՔԵԱՅԻ), ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ, ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆ	
Նաղորդակից է աստուածասպանիցն եւ որոց զառաքեալսն Տեառն կոտորեցին. Իգն. Թուղթ ԺԳ. Նրեայքն ի չար սովորութիւնսն յառաջանալով աստուածասպանք եղեն... Եփրեմ Ասորի: Յուդա աստուածավաճառ, հրեայք աստուածասպանք. Օրբ. Թուղթ: ՆԲՏ, Ա, էջ 329, «Եփրեմի Խրատը եղբարց», ՄՄ, ձեռ. 515, թ. 108ա:	Նոքա եւս իբրեւ զմարդ խաչեցին, բայց աստուածասպանք կոչեցան...
ԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՆԻԿԻԱԿԱՆ	
Ծնաւ կարարեղապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Նոգւովն Սրբով, որով Էառ մարմին, հոգի եւ միս, եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեալք... «Խորհրդալեկոյ սրբազան Պարարագի», Կ. Պոլիս, 1787, էջ 14:	Սուրբ հարքն ասացին, թէ Նոգւով Սրբով, որով Էառ զամենայն, որ ինչ է ի մարդ՝ առանց ապականութեան...

Աստվածաշնչական յղումները բերում ենք բնագրի մեջ, փակագծերով:

Սահակ Մխայնակեացի երկը հրապարակում է ըստ ՄՄ հետևեալ ձեռագրերի.

A = 1712

Ժողովածոյ: **Ժամանակ՝** ԺԵ դ.: **Գրիչ՝** Սահակ կրօնաւոր: **Թերթ՝** 252: **Նիւթ՝** թուղթ: **Գրութիւն՝** միասին: **Գիր՝** բոլորգիր: **Տող՝** 21: **Բնագիր՝** թ. 93բ-113բ:

B = 1764

Ժողովածոյ: **Ժամանակ՝** 1651-1654 թթ.: **Վայր՝** Նամիթ: **Գրիչ՝** Սարգիս արդ., **Ստացող՝** Սարգիս վրդ.: **Թերթ՝** 379: **Նիւթ՝** թուղթ: **Գրութիւն՝** երկսին: **Գիր՝** ուսիրգիր: **Տող՝** 33: **Բնագիր՝** թ. 368ա-376ա:

C = 728

Ժողովածոյ: **Ժամանակ՝** 1621 թ.: **Վայր՝** Շապուխ գիւղ (Գանձակ): **Գրիչ՝** Ռեանէս: **Թերթ՝** 318: **Նիւթ՝** թուղթ: **Գրութիւն՝** միասին: **Գիր՝** բոլորգիր: **Տող՝** 19-21: **Բնագիր՝** 84ա-116բ¹⁷:

ՅԱԿՈԲ ԲԷՆՍԷԼՆ
փիլիսոփայական գիւր. դոկտոր

17 Երկն առկայ է նաեւ ՄՄ, թիւ 2268 (84բ. [1683 թ.], 774 (124ա), [1651 թ.], 2220 (123ա), [1789/90 թ.]), 9410 (ԺԹ դ.) ձեռագրերում, ինչպէս նաեւ՝ Վիեննայի թիւ 116 ձեռագրում (հին թիւ 78), թ. 59բ-61բ (1634 թ.), ուր, սակայն, բնագիրը վերջից թերի է. րես «Յուցակ հայերէն ձեռագրաց մարենադարանին Մխիթարեանցի Վիեննա», կազմեց Ն. Յակովբոս վրդ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 398:

Մեր «Մատենոս Զուղայեցու ջատագովական գրությունը» հրապարակման մեջ («Էջմիածին», 2010, էջ 100-101) արաբատառ շարվածքում համակարգչային անհամապատասխանությունն պատճառով տեղ են գտել վրիպակներ, որի համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը:

ՍԱՆՏԱԿԱՅ ՍՈՒՐԲ ՄԻԱՅՆԱԿԵՅԻ ԵՒ ԵՐԱՆԵԱԼ ՃԳՆԱԲՈՐԻ
ԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ, ԵՒ ԸՆԴԴԷՄ
ՉԱՐԱՓԱՌԱՅՆ ՆԱՐՅՈՒՄՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ*

Նաապրով¹ խոստովանիմք եւ² դաւանեմք, պաշտեմք եւ երկրպագեմք եւ փառա-
տրեմք³ զգուգափառ⁴ զմիութիւն ամենատուր Երրորդութեան՝ Նաւր եւ Որդոյ եւ Նոգ-
ւոյն Սրբոյ, Նայր անսկիզբն եւ անպարճառ, որոց եւ⁵ ինքն է սկիզբն եւ պարճառ՝ Որդոյ՝
ծննդեամբ եւ Նոգւոյն Սրբոյ⁶ բղխմամբ⁷: Թեպէր եւ սկսեալք⁸ են ի Նաւրէ, այլ հաւա-
սարք⁹ են ընդ Նաւր, ըստ բանին Տեառն, որ ասէ, թէ՝ «Եւ եւ Նայր իմ մի եմք» (Յովհ. Ժ 30)»,
եւ վասն Նոգւոյն, որ¹⁰ ասէ Յիսուս առ սամարացին, թէ՝ «Նոգի է Աստուած» (Յովհ. Դ 24):
Նոգի է ըստ առանձնաւորութեան եւ Աստուած է ըստ բնութեան, Վասն զի Աստուածութիւն
բնութիւն է Սուրբ Երրորդութեան:

Եւ ասէր Տէրն, թէ՝ «Նոգի է Աստուած», եւ ոչ ասէր, թէ եղև, այլ թէ՝ «Է»: Եւ «Է»-ն ցու-
ցանէ, թէ ոչ է եղեալ, եւ է բղխեալ ի Նաւրէ, ըստ Դաւթի, որ ասէ, թէ՝ «Ի քէն է Տէր աղբեր
կենաց¹¹ եւ լուսով երեսաց քոց փրսանեմք զոյս» (Սղմ. ԼԵ 10), եւ ոչ¹² ասէ, թէ ի ձէնջ է, այլ
թէ՝ «ի քէն է»: Ըստ նմին եւ Եսայիաս¹³ ի նոյն բանս ասէ. «Տէր Տէր առաքեաց զիս եւ Նոգի
նորա» (Եսայի ԽԸ 16), Տէր՝ Նայր եւ Տէր՝ Որդի եւ «Նոգի նորա» ասէ, եւ ոչ ասէ, թէ՝ Նոգի նո-
ցա, այլ թէ՝ «նորա», վասն զի մի միոյն է բղխումն եւ ոչ յերկոցունցն¹⁴, որպէս Որդի միայն ի
Նաւրէ ծնեալ եւ ոչ ի Նոգւոյն, նոյնպէս եւ Նոգին ի Նաւրէ միայն է բղխեալ եւ ոչ ի յՈրդոյն¹⁵:
Եւ այլ իմն պարճառ, եւ եթէ Նոգին ի յՈրդոյն եւս բղխէ, որպէս ի Նաւրէ, ապա եւ Բ (2) հո-
գի իմանի¹⁶ մինն՝ ի Նաւրէ եւ մինն՝ ի յՈրդոյն, եւ եթէ մի¹⁷ Նոգի¹⁸ յերկոցունցն բղխէ՝ ահա
մասնաւոր փրսանի¹⁹, որ է յոյժ հայեցութիւն: Եւ թէ հարցանեն, թէ ընդէ՞ր ասաց Որդի, թէ՝
«Յիմմէ²⁰ անորի առնուցու եւ պարմեսցի ձեզ» (Յովհ. ԺԶ 15) որ եթէ այս զբղխումն ասէ, այլ
Յիսուս յայր առնէ ասելովն. «Ոչ յանձնէ ինչ խառնեսցի» (Յովհ. ԺԴ 10) այլ զոր ինչ²¹ լուիցէ՝

* Մատակայ սուրբ միա[յ]նակեցի եւ երանեալ ճգնաւորի ասացեալ դաւանութիւն ի Սուրբ Երրորդութիւն եւ ընդ չարախաւսացն
հար[ց]ումն եւ պարափառնի:

1 Ա չիք Նաապրով:

2 Ը չիք եւ:

3 Ա չիք փառատրեմք:

4 Բ չիք զգուգափառ:

5 Ա չիք եւ:

6 Ա չիք Սրբոյ:

7 Բ ծննդեան... բղխմանն (ի լուս. ուղղութեամբ):

8 Ը սկսեալ:

9 Ը չիք այլ հաւասարք են ընդ Նաւր:

10 Ա չիք որ:

11 Ը կենդանութեան:

12 Ը չիք ոչ:

13 Ը Եսայի:

14 Բ յերկոցն:

15 Ը Որդոյն:

16 Ը իմանէ:

17 Ը չիք մի:

18 Ը հոգին:

19 Ը փրսանէ:

20 Ը իմմէ:

21 Ը չիք ինչ:

խառնուստի եւ զգալոցն²² պարմնեցէ ձեզ: Քանզի որպէս Որդին Նոգովն առնէր զգարութիւն ասելովն, թէ՛ «Ես Նոգովն Աստուծոյ հանեմ զդուս» (Մարթ. ԺԲ 28), նոյնպէս եւ Նոգին Սուրբ Որդովն պարմէր զիմաստութիւն, ըստ²³ Պատգոսի, որ ասէ, թէ «Առաքեալս²⁴ Աստուծոյ զՆոգին Որդոյ իւր²⁵ ի սիրտս մեր, որ աղաղակեմք Աբբա հայր» (Նոմով. Ը 15): Եւ եթէ ասեն, թէ փչեաց յաշակերպսն իւր եւ ասէ. «Առեք Նոգի Սուրբ» (Յովհ. Ի 22), այս բղիտմն է, ապա եւ այս եւս ծնունդ է Որդին ի Նոգոյն, ըստ հրեշտակին, որ առ Յովսէփ ասէր, թէ յղութիւն նորա ի Նոգոյն Սրբոյ է: Ահա շփոթումն երեւի, որ²⁶ Որդին եւ²⁷ բղիտաւ եւ Նոգին Սուրբ՝ ծնաւ: Զայս ոչ փեսանեմք ի²⁸ Սուրբ²⁹ Երրորդութեան: Եւ զայս եւս ասէ Որդի առ Նայր, թէ՛ «ամենայն որ ինչ քո է՝ այն իմ» (Յովհ. ԺԷ 10) է³⁰. ոչ եթէ այս բղիտմն ասէ, այլ՝ զանհաս էութիւն: Զնոյն եւ³¹ ինքն ասէ, թէ՛ «Ամենայն որ ինչ իմ է՝ այն քո է» (Անդ). ոչ եթէ այս³² զմարմնաւան ասէ, այլ՝ զգարութիւն: Ապա թէ ասիցեն, եթէ Որդին անկենդան³³ է, վասն զի ի նմանէ ոչ բղիտ Նոգին, ահա եւ ասասցուք, եթէ Նոգին եւս³⁴ անբան է, քանզի ի նմանէ ոչ եւս ծնունդ Որդի, որ է յիմարութիւն զայս կարծել: Այլ³⁵ պարտ է իմանալ, քանզի հայրութիւն ոչ է բնութիւն, եւ որդիութիւն Բանին ոչ է բնութիւն, եւ բղիտութիւն Նոգոյն ոչ է բնութիւն, այլ յարկութիւնքն³⁶ առանձնաւորութեանցն են ի մի բնութիւն: Եւ հարցանեմք ընդ նոսա, եթէ Նոգին Սուրբ բղիտմն է եւ Որդին միաձին ծնունդ³⁷ զբղիտմն ի վերայ անձինն ասէր, թէ՛ ի վերայ բնութեան. զի եթէ ի վերայ անձինն ասէր՝ ահա որ երկու անձն առէր զՆոգին Սուրբ՝ զմիւսն ի Նարէ եւ զմիւսն յՈրդոյ, եւ եթէ ի վերայ բնութեանն ասէր, եթէ բղիտաւ Նարէ եւ յՈրդոյ³⁸ ահա որ զբնութիւն այլայլեցիք: Քանզի զՆոգին Սուրբ որ³⁹ ասէր, եթէ բնութիւն է, եւ յերկոցունցն բղիտ, ապա եւ բղիտաւքն հեռի են ի բնութենէ, քանզի նոքա ոչ են բղիտաւ, այլ բղիտդք են:

Եւ արդ, մարիցոր առ կենսաւորս փրկիչն մեր Յիսուս Քրիստոս, եթէ⁴⁰ որպէ՛ս էլ յարգանդ Կոստին, եւ կամ զի՛նչ էաւ⁴¹, եւ որպէ՛ս միաւորեցաւ, եւ զիա՛րդ կրեաց զկիրս ամենայն, եւ որպէ՛ս էր անմեկնելի եւ ի Նոգոյն Սրբոյ. եթէ ինքն կամեսցի՝ յայտ արասցէ: Ասաց հրեշտակն առ ամենասուրբ կոյսն Մարիամ. «Նոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զարութիւն բարձրելոյն հովանի եղիցի⁴² ի վերայ քո» (Դուկ. Ա 35): Եկն Նոգին Սուրբ զարութեամբ եւ մաքրա-

22 Շ գալոցն:

23 Շ իւր ըստ:

24 Շ առաքեալ:

25 Շ իւր:

26 Շ իւր:

27 Շ Որդին սուրբ:

28 Շ առ փիւ ի:

29 Շ իւր Սուրբ:

30 Շ իմմէ:

31 Շ իւր եւ:

32 Շ իւր այս:

33 Շ անկենդանի:

34 Շ իւր եւս:

35 Շ ապա փիւ. այլ:

36 Շ յարկութիւնք:

37 Շ միաձնունդ փիւ. միաձին ծնունդ:

38 Շ Որդոյ:

39 Շ իւր:

40 Շ եւ եթէ:

41 Շ եւ առ փիւ. էաւ:

42 Շ լիցի (ի լուս. ուղղութեամբ եղիցի):

գործեաց⁴³ զԿոյսն սուրբ յամենայն մարմնական կրից, և ապա Որդին միածին կամա Նաւր և գործակցութեամբ Սուրբ հոգւոյն էջ բնակեցաւ ի սուրբ Կոյսն, և անպարագրելի անձն Որդւոյ պարագրեցաւ ի Կուսէն⁴⁴: Ըստ Պաղոսի, որ ասէ, թէ՝ «Որ է կերպարանս Աստուծոյ էր ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զիմեյն⁴⁵ հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց և զկերպարանս ծառայի էառ (Փիլիպ. Բ 7)» և ընդ իջանել Բանին էառ յարեմէ ամենամաքուր Կուսին, և ի վերայ իւր աստուածային անձինն անձնացոյց, ըստ հարցն սրբոց, որ ասացին, թէ՝ էառ Նոզի և մարմին և միս և զամենայն, որ ինչ է մարդն՝ առանց ապականութեան, էառ և աստուածացոյց, ըստ Դաւթի, որ ասէ, թէ՝ «աւծ զքեզ Աստուած Աստուածն քո (Սղմ. ԽԴ- 8)», ոչ եթէ զԲանն ասէ, այլ զմարդկութիւն, և ըստ Յիսուսի, որ ասէ ի Յոհան զյուսն, թէ՝ «զՈրդի մարդոյ քացեալ⁴⁶ ձեզ, քանզի զնա Նայր կնքեաց Աստուած (Յովհ. Զ 27)»: Եւ արդ, ոչ ասեմք երկուս՝ այլ իմն զաւծածն⁴⁷ և այլ իմն զաւծաղն. այլ ասէ միատրութեամբ, և կնքեաց Աստուածութեամբն: Որպէս մի է կերպարան Նաւր և մի կերպարան Նոզոյն Սրբոյ, նմանապէս⁴⁸ և մի կերպարան Բանին և մարդկութեան, թէպէտ և Պաղոս երկուս ասէ⁴⁹, այլ զմիատրութիւն ինքն ցուցանէ ասելով, թէ՝ «Մեզ մի է⁵⁰ Աստուած Նայր և մի է⁵¹ միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս (Ա Տիմ. Բ 5)», քանզի որպէս ի հոգւոյ և ի մարմնոյ⁵² կոչի մի մարդ, նոյնպէս և աստուածային բնութիւն և մարդկային բնութիւն կոչի մի մարդ, որոյ⁵³ զանունն Քրիստոս Աստուած ճանաչեմք: Դարձեալ ասէ Պաղոս, եթէ՝ «մարդով եղի մահ և. մարդով եղի⁵⁴ յարութիւն մեռելոց» (Ա Կորնթ. ԺԵ 21): Եւ ինքն ցուցանէ, եթէ՝ Ուստի՞ է մարդս այս, որով⁵⁵ զյարութիւն⁵⁶ արար, ասելով թէ՝ «առաջին մարդն յերկրէ հողէն, իսկ երկրորդ մարդն՝ Տէր յերկնից» (Ա Կորնթ. ԺԵ 47): Տեսանես, զի թէպէտ մարդ ասէ զՅիսուս Քրիստոս, այլ «յերկնից» ասէ, ըստ այնմ, զոր և Պաղոս ասէ, թէ Յիսուսին Քրիստոսին եղի ամենայն, որ⁵⁷ ինչ յերկնիս⁵⁸ և որ ինչ յերկրի⁵⁹, թէ՛ երկնիք, թէ՛ երկիր, թէ՛ Աթոռք, թէ՛ Պնկութիւնք, թէ՛ Իշխանութիւնք (Կողոս. Ա 16): Տեսանես, զի զՅիսուս, զոր և մարդ ասէ, յերկնից ասէ և արարչակից ընդ Նաւր և ընդ⁶⁰ Նոզոյն Սրբոյ: Եւ արդ, զայս եւս զիսկելի է, զի և Պաղոս երկու կերպարանս ասէ զՅիսուս Քրիստոս. զմիմն իջեալ և զմիմն առեալ: Եւ եթէ երկու բնութիւնքն ոչ միատրեցան, որպէս հերձուածողքն ասեն, ահա որ երկու կերպարանք են⁶¹, քանզի Պաղոս զկերպարանսն երկու ասաց և ոչ զբնութիւն, և

43 BC մաքրեաց:

44 C Կուսէն:

45 C զիմեյն:

46 BC առցէ:

47 BC զաւծածն:

48 A նոյնպէս:

49 B չիք ասէ:

50 C մի է մեզ:

51 C չիք է:

52 C հոգւոյն... մարմնոյն:

53 C ոչոյ:

54 C չիք եւ:

55 A որոյ:

56 BC յարութիւն:

57 A չիք որ:

58 C ինչ եղեմ թէ երկնիք:

59 C թէ երկիր փիւ, և որ... յերկրի:

60 C չիք ընդ:

61 C կերպարանքն փիւ. կերպարանք են:

երթ կերպարանքն⁶² ոչ միատրեացաւ ահա եւ⁶³ Երրորդութեան կերպարանն չորրորդութիւն⁶⁴ արեւանի: Եւ թէ ասիցեն, թէ Պաղոս վասն⁶⁵ երկու բնութեան զերկու կերպարանն ասաց՝ ընդ այս եւս մոլորին⁶⁶, քանզի⁶⁷ թէ Երրորդութիւն⁶⁸ մի կերպարան է, որպէս եւ մի բնութիւն, ահա եւ զանձնատրութիւնքն ուրացան, քանզի կերպարան եւ պարկերն⁶⁹ ի վերայ անձինն ասի եւ ոչ ի վերայ բնութեան, քանզի յամենայն Սուրբ գիրս արեւանեմք⁷⁰ զպարկերսն եւ զկերպարանս⁷¹ եւ զանձինս⁷² երիս, ըստ Մովսէսի, որ ասէ, թէ Աստուած ասաց. «Արասցուք մարդ, ըստ պարկերի մերում» (Ծնդ. Ա 27): Եւ վասն անձինն ասէ Յիսուս, թէ՛ «Որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս եւ Որդոյն եւր ունի կեանս յանձին իւրում (Յովհ. Ե 26)»⁷³: Ոչ երթ Որդի⁷⁴ ոչ ունէր, այլ զայն ցուցանէ Յիսուս, թէ՛ «Որ յանձնէ իւրմէ խաւսի՝ փառս անձին իւրում խնդրէ» (Յովհ. Է 18): Վասն այն⁷⁵ զՀայր պարճաւ ցուցանէ, զի մի՛ Որդին միայն փառատրեսցի: Եւ վասն Հոգւոյն ասէր, թէ՛ «Ես Հոգւովն Աստուծոյ հանեմ զդեռ» (Յովհ. ԺԱ 20, ուր սակայն «մարամբ» **փիս** «Հոգւովն»), զի եւ Հոգին փառատրեսցի ընդ Հաւր եւ ընդ Որդոյն միաձնի: Եւ դարձեալ ի Յորդանան յայրմասպէս⁷⁶ արեւանեմք զերրորդ կերպարանն եւ ոչ⁷⁷ զչորրորդն: Եւ արդ, խնդրելի է, թէ⁷⁸ կերպարանն Որդոյն, որ էջն յերկնից, միատրեացաւ ընդ կերպարանին⁷⁹ մարդոյ, որպէս էր յարգանդ Կուսին, կամ որպէս ընդ հաւր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ, եւ⁸⁰ որպէս Հայր եւ Հոգի ընդ նմա էին ոչ անձնատրութեամբ, այլ զարութեամբ եւ միատրութեամբ, նոյնպէս⁸¹ եւ Որդին ընդ Հաւր մի էր ընդ Հոգւոյն Սրբոյ, ըստ հրամանի Փրկչին, որ ասէ⁸², թէ՛ «Ես ի Հայր եւ Հայր ի յիս». ոչ երթ որպէս ընդ ոմն ինչ ասէր, այլ զանորոշութիւն ցուցանէր, քանզի թելէր եւ անշաղափելի Բանն շաղափեցաւ, ըստ Յովհաննու, որ ասէ, թէ՛ «Ձեռք մեր շաղափեցին ի վերայ Բանին կենաց» (Ա Յովհ. Ա 1), սակայն⁸³ անշաղափելի մնաց, քանզի ոչ շփոթեցաւ: Նոյնպէս եւ մարդկութիւն անշաղափելի էր ըստ Բանին միատրութեամբն եւ ոչ շփոթմամբ, ըստ բանին Տեառն⁸⁴, որ ասէ, թէ՛ «Ոչ որ ել յերկինս, երթ ոչ որ էջն յերկնից՝ Որդի մարդոյ, որ Էնն յերկինս» (Յովհ. Գ 13), քանզի որ-

62 C կերպարանն:

63 B որ **փիս**. եւ:

64 B չորրորդութեան:

65 A **չիք** վասն:

66 B մոլին **փիս**. մոլորին:

67 B **չիք** քանզի:

68 C Երրորդութիւն:

69 C կերպի **փիս**. պարկերն:

70 B **չիք** արեւանեմք:

71 C զկերպարանքն եւ զկերպարանքն **փիս**. զպարկերսն եւ զկերպարանս:

72 C զանձինքն:

73 B **չիք** նոյնպէս եւ ... իւրում:

74 C Որդանան:

75 BC այսորիկ **փիս**. այն:

76 AB **չիք** յայրմասպէս:

77 A **չիք** ոչ:

78 BC **չիք** թէ:

79 A կերպարանի, B կերպարանն:

80 C **չիք** եւ:

81 BC որպէս **փիս**. նոյնպէս:

82 C ասէր:

83 C սակայն:

84 C **չիք** Տեառն:

պէս զհացն և զգինին անապական⁸⁵, զոր Տէրն եր աշակերտացն, զկուսածին Քրիստոսն⁸⁶ հաւարամբ, նոյնպէս և զհոգին բանականն և զմարմինն, զոր և ի Կուսէն էառ, Աստուած յաւիտենական հաւարամբ: Եւ եթէ ասեն⁸⁷, թէ ի Կուսէն էառ յաւիտենական ոչ է՝ ասենք, եթէ զհացն ի սեղանոյն և զգինին ի բաժակէն էառ⁸⁸ Յիսուս, այն ևս ոչ է կուսածին Քրիստոս: Ահա որ ամենայն դիմաւ կուրացեալ գրանին, որք զայսպիսիս կարծիս քացեն կուսածին Արքային, և նզովեալք են:

Դարձեալ հարցցուք և մեր ընդ նոսա, եթէ Աստուած կարարեալ էր Քրիստոս և մարդ կարարեալ՝ զկարարելութիւն վասն բնութեան՝ ասէք, թէ՞ վասն անձինն, զի թէ ի վերայ բնութեան ասէք⁸⁹՝ ահա որ երկու կարարելութիւն քնսանի ի Սուրբ Երրորդութեան, քանզի Երրորդութիւն մի բնութիւն է, և մի բնութիւն մարդկութեան⁹⁰՝ ահաւոր զԵրրորդութիւն ասէք մարմնացեալ, որ է յոյժ հայեցողութիւն, զի թէպէտ և Սուրբ⁹¹ Երրորդութիւն մի բնութիւն է⁹², այլ Նայր և Նոգին ոչ առին մարմին, բայց միայն՝ Որդին: Եւ թէ զերկու կարարելութիւն ի վերայ անձինն ասէք, ահա որ Երրորդութիւն⁹³ անձնատրութիւն չորրորդութիւն ևս, որ է Նեստորի քարախաւսութիւն: Եւ եթէ ասիցեն, եթէ զմարդկային անձն ոչ ունէր Քրիստոս, քանզի զաստուածային անձն ունէր, ասասցուք և մեր, թէ զաստուածային բնութիւն ունէր՝ ընդէ՞ր և զբնութիւն էառ: Եւ այլ իմն պառճառ⁹⁴, զի թէ զմարդկային անձն ոչ ունէր⁹⁵, ապա և սուր խաւսիք, թէ մարդ կարարեալ է, և որ սուր խաւսի՝ ի սալաւանայէ է⁹⁶: Իսկ մեր այսպէս դաւանեմք զՔրիստոս, քանզի Աստուած կարարեալ է Քրիստոս⁹⁷ և մարդ կարարեալ, և ընդ⁹⁸ յիջանել Բանին յարգանդ սուրբ Կուսին էառ զկարարեալն և ոչ զմասնատրն, քանզի որպէս աստուածային կերպարանն և մարդկային կերպարանն միատրեցաւ և է մի⁹⁹ կերպարան, նմանապէս¹⁰⁰ և աստուածային կարարելութիւն և մարդկային կարարելութիւն միատրեցաւ¹⁰¹ և է մի կարարելութիւն: Սոյնպէս և¹⁰² աստուածային բնութիւն և մարդկային բնութիւն միատրեցաւ և է մի բնութիւն, նմին նման և աստուածային ներգործութիւն և մարդկային ներգործութիւն միատրեցաւ, և է մի ներգործութիւն: Սմին նման և աստուածային կամքն և մարդկային կամքն միատրեցաւ¹⁰³, և է մի կամք՝ ոչ բաժանմամբ ասենք, ըստ Նեստորի և ոչ շփոթմամբ, ըստ Եսիբի, այլ անշփոթ միատրութեամբ խոստովանիմք զՔրիստոս: Բանզի որպէս Նայր մի է և ոչ ասենք՝ երկուս, նմանապէս և մարմնացեալ Բանն

85 Կ անապան:

86 Ա զկուսածին Քրիստոսն (լուսանցքից):

87 BC ասիցեն:

88 Կ էառ **փիս**, էառ:

89 B կրկն, «թէ վասն անձինն... ասէք» և **ջնջված**:

90 Ա մարդկութիւն (**ի լուս. ուղղման նշանով**):

91 Ա **շիք** Սուրբ:

92 Կ միաբանութիւն **փիս**, մի բնութիւն:

93 Ա երրորդ:

94 Ա **ի լուս.** «Սր» (= Սրեպիանոս):

95 Կ չունէր **փիս**, ոչ ունէր:

96 Կ սալաւանայի:

97 B **շիք** Քրիստոս:

98 Կ **շիք** ընդ:

99 Կ **շիք** մի:

100 Ա նոյնպէս:

101 Կ միաբանեցաւ:

102 BC **շիք** և:

103 Կ **շիք** մի ներգործութիւն...միատրեցաւ:

Աստուծոյ մի է եւ ոչ ասեմք երկուս¹⁰⁴: Սոյնպէս եւ Տոգին Սուրբ մի է, եւ ոչ ասեմք երկու, զի մի¹⁰⁵ Երրորդութիւն չորրորդութիւն համբաւեսցի:

Եւ արդ, հարցումն, զոր եթէ հարցանիցեն, եթէ ընդէ՞ր Տայր եւ Տոգի ոչ առին մարմին, բայց միայն՝ Որդին:

Պատասխանի. Բանգի Տայր անծին է, եւ եթէ Տայր առնոյր մարմին եւ ծնանէր՝ լուծանէր ի հայրութենէ, նոյնպէս եւ Տոգին Սուրբ, քանզի Տոգին Սուրբ բոլորումն է ի բոլորէն եւ ոչ ծնունդ, եւ եթէ Տոգին եւս առնոյր մարմին եւ ծնանէր, նա եւս ելանէր ի հոգիութենէ եւ Որդի լինէր: Եւ այս փոփոխումն լինէր եւ ոչ հասարակութիւն: Այլ Որդին միայն է¹⁰⁶ ծնեալ ի Տայր եւ Որդին միայն ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ, եւ Որդին Որդի մնաց եւ ոչ փոխեցաւ:

Հարցումն. Եթէ Որդին միայն մարմնացաւ, ապա եւ յաւելաւ քան զՏայր եւ քան զՏոգին Սուրբ, քանզի յառաջ քան զմարմնանալն հաւասար էր ընդ Տայր եւ ընդ¹⁰⁷ Սուրբ Տոգոյն:

Պատասխանի. Նախ¹⁰⁸ ասացուք, եթէ ոչ միատրեցաւ Բանն Աստուծոյ ընդ մարդկութեան՝ յաւելաւ, ապա թէ միատրեցաւ՝ ոչ յաւելաւ, քանզի թէպէտ ի սրբոյ¹⁰⁹ Կուսէն էառ զմարդկային բնութիւն, այլ յառաջ է քան զյաւելանալն, ըստ Յիսուսի Քրիստոսի Տեառն¹¹⁰, որ ասէ յԱնկարարան Յռեաննու, թէ՛ «Ելանիցէ Որդի մարդոյ, որ էր զառաջինն» (Յովի. Զ 63): Տեառնէս, զի Քրիստոս զմարդկային բնութիւն, «որ էր»ն ասէ. որ եթէ յարգանդ Կուսին ելն, ուստի ծնան, այլ յերկինս համբարձաւ եւ ընդ աջմէ Տայր նստաւ¹¹¹: Եւ եթէ ասիցեն, եթէ Որդի մարդոյ զԱստուածութիւն ասէ, ասացուք¹¹² եւ մեք, եթէ ի բազում րեղիս¹¹³ զՈրդի մարդոյ ասէ Յիսուս, զայն ամենայն վասն Աստուածութեան ասէ եւ ոչ վասն մարդկութեան, ըստ նոցա կարծեացն, այլ այս է ճշմարիտն, քանզի թէպէտ ի սրբոյ Կուսէն էառ զմարդկութիւն, այլ Բանն Աստուծոյ յառաջ քան զյաւելանալն հանդերձ մարդկութեամբն էր Որդի Աստուծոյ, որպէս զհացն եւ զգինի անապական հանդերձ բանին¹¹⁴, զոր ասաց Յիսուս, թէ՛ «Այս մարմին իմ¹¹⁵ եւ արիւն իմ» (Դուկ. ԻԲ 19) կուսածին¹¹⁶ Աստուծոյ հաւասարմբ: Թէպէտ¹¹⁷ յնկր բազում ամաց ի սեղանոյն էառ, նոյնպէս եւ զմարդկութիւն, որ ի Կուսէն էառ հանդերձ Աստուածութեամբն յառաջ քան զյաւելանալն խոստովանիմք: Եւ այս¹¹⁸ եւս ուղիղ է, քանզի թէպէտ ար ըստ արեւ առնուն¹¹⁹ քանաւայքն հաց եւ զինի անապական պարարագի եւ ոչ յաւելաւ ի Քրիստոս, նոյնպէս եւ Բանն Աստուծոյ էառ զմարդկութիւն, աստուածացոյց, եւ ոչ յաւելաւ յԱստուածութիւն, քանզի հորն միատրեցաւ ընդ յերկաթի եւ զսեւութիւն երկաթին ներկեաց եւ ոչ յաւելաւ ջերմութիւն հրոյն:

104 Երկու:

105 Տէր եւ ոչ ասեմք ... զի մի:

106 Տ մի փիլ. միայն:

107 Տ Տէր ընդ:

108 Ե նախ ի լուս.:

109 Տ սուրբ:

110 Ա Տէր Տեառն:

111 Տ Տէր նստաւ:

112 Տ ասացուք:

113 Տ րեղի:

114 Տ զԲանն:

115 Ե Տէր իմ:

116 Ե Կուսին փիլ. կուսածին:

117 Ե Թէ փիլ. Թէպէտ:

118 Ե այսու (ու-վրա ուղղման նշան):

119 Տ առնոյն:

Նարցումն. Եւ ընդէր ասէ Յիսուս, թէ՛ «Քակեցէք զքաճարս զայս, եւ ես զերիս ատուրս շինեցից զսա» (Յովհ. Բ 19): Եւ Աւերաբանիչն ասէ, թէ՛ «Տաճար վասն մարմնոյ իրոյ ասէ» (Յովհ. Բ 21): Եւ չարափառքն յոյժ ուրախանան:

